

## ՏԵՂԵԿԱՆՔ

### 2013թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդ վաճառքներով օտարված հողամասերի վերաբերյալ

Համաձայն ՀՀ մարզպետարանների ներկայացված տեղեկատվության՝ 2013թ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճուրդ վաճառքներով օտարվել է **791 հա** հողեր՝ **1.081.000.790** հազ. դրամով:

Օտարումները համեմատաբար ակտիվ են եղել Կոտայքի /**188 հա**/, Արարատի /**165 հա**/, Արմավիրի /**140 հա**/, Արագածոտնի /**114 հա**/ մարզերում, առավել պասիվ՝ Լոռու /**8 հա**/, Շիրակի /**9 հա**/, Վայոց ձորի /**24 հա**/ և Տավուշի /**25 հա**/ մարզերում:

	ՀՀ մարզ	Աճուրդների քանակը	Տարածքը /հա/	Գումարը /հազ. դրամ/
1.	Արագածոտն	105	114	36.527
2.	Արարատ	77	165	138.097
3.	Արմավիր	100	140	44.017
4.	Գեղարքունիք	172	68	61.192
5.	Լոռի	136	8	37.909
6.	Կոտայք	456	188	529.778
7.	Շիրակ	72	9	34.468
8.	Սյունիք	65	50	28.919
9.	Վայոց Ձոր	57	24	16.049
10.	Տավուշ	147	25	154.044
	<b>Ընդամենը</b>	<b>1387</b>	<b>791</b>	<b>1.081.000</b>

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Ըստ իրականացված աճուրդների քանակի՝ ընդամենը ՀՀ - ում կազմում է **1387** միավոր, որից **348** միավոր (**725.4** հա) գյուղատնտեսական նշանակության, **958** միավոր (**46.7** հա) բնակավայրերի, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության **49** միավոր (**11.6** հա), հատուկ պահպանվող **27** միավոր (**6.3** հա) և **5** միավոր (**0.5** հա) էներգետիկայի հողերի հողերի աճուրդ:

N	ՀՀ մարզ	Օտարված հողի արդյունքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	100 տոկոս կադաստրային արժեքի վաճառքի դեպքում ձևավորված եկամուտը (հազ. դրամ)	Տարբերությունը	%
1.	Արագածոտն	36.527	37.734	-1.207	97 %
2.	Արարատ	138.097	140.405	-2.308	98.4 %
3.	Արմավիր	44.017	37.880	6.137	116.2 %
4.	Գեղարքունիք	61.192	83.498	-22.305	73.3 %
5.	Լոռի	37.909	32.788	5.120	115.6 %
6.	Կոտայք	529.778	514.797	14.981	102.9 %
7.	Շիրակ	34.468	21.237	13.231	162.3 %
8.	Սյունիք	28.919	19.613	9.307	147.5 %
9.	Վայոց ձոր	16.049	21.987	-5.938	73 %
10.	Տավուշ	154.044	82.527	71.517	186.7%
	<b>Ընդամենը</b>	<b>1.081.000</b>	<b>992.466</b>	<b>88.535</b>	<b>108.9%</b>

Մարզերը ըստ ընտրված հերթականության/

Բերված աղյուսակից երևում է, որ օտարված հողամասերի դիմաց գանձված գումարների հարաբերությունը դրանց կադաստրային արժեքի համեմատ ՀՀ մարզերում տարբեր են՝ այսպես օրինակ ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են ՀՀ Տավուշի մարզում **186.7%** (71.517 հազ.դրամի օգուտ), ՀՀ Շիրակի մարզում **162.3%** (13.231 հազ.դրամի օգուտ), ՀՀ Սյունիքի մարզում **147.5%** (9.307 հազ. դրամի օգուտ), իսկ ամենացածր ցուցանիշները ՀՀ Վայոց ձորի մարզում է **73%** (-5.938 հազ. դրամի պակաս), ՀՀ Գեղարքունիքի մարզում **73.3%** (-22.305 հազ. դրամի պակաս) և ՀՀ Արագածոտնի մարզում **97%** (-1.207 հազ. դրամի պակաս):

Ներկայումս հողերի աճուրդների վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Առաջարկում ենք աճուրդների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել նաև համայնքների, ինչպես նաև մարզպետարանների էլեկտրոնային կայքերում և հետամուտ լինել դրանց պատշաճ կատարմանը: